

ՀԻՆ ԶԵՆՔԸ ՆՈՐ ԶԵՌՔԵՐՈՒՄ

ԿԱՄ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԵՂԾՎՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ

(Այիգրք՝ 3-րդ էջում)

Ինքնորոշման իրավունք է տրվում: Կիրովի և Օրջոնիկիձևի այդ դիրքը իր կոնկրետ արտահայտությունը գտավ նաև (1947) Կոմկուսյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 4-ի նիստում, որտեղ նրանք բովանդակեցին Հայաստանի օգտին: Իսկ թե ինչու «այդ օրը» հուլիսի 5-ին Օրջոնիկիձևն փոխեց իր դիրքորոշումը և հենց ինքը հարց բարձրացրեց նախորդ օրվա որոշումը վերանայելու վերաբերյալ, ապա այդ մասին, մեր կարծիքով, պետք է հարցնել Ստալինին: Ժողովածուի հեղինակները նաև «մոտացել են» մի շարք այնպիսի փաստաթղթերի մասին, որոնցում տրված է Գ. Օրջոնիկիձևի և Ա. Կիրովի հետակ դիրքորոշումը Լենային Ղարաբաղի հարցում: Հատկապես նկատու ենք 1921 թ. հուլիսի 26-ին Ն. Սարգսյանից ուղարկած նրանց հեռագիրը, որտեղ, մասնավորապես, ասված է. «Եթե հետադարձում ես մեր կարծիքով, ապա այն հետևյալն է. հանուն բոլոր բախումների վերջնական լուծման և իրական բարեկամական կապերի հաստատման, Առևային Ղարաբաղի հարցը լուծման ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել այսպիսի սկզբունքով՝ ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չի կապվի միացնել Հայաստանին» (ՆՍԿԿ ԿԿ առևմտյան ՄԻԻ ԿԿՄ, ֆ. 85, ց. 18, գ. 229, թ. 1—2): Մինչդեռ ոչ թե գյուղային մի ամբողջ Հայաստան կերպարամաս (Լենային Ղարաբաղը և հարակից Հայաստանի շրջանները) ապօրինաբար, առանց ազգաբնակչության կամքի հարցման, ղրվեց Ադրբեջանի ղեկավարության տակ: Ինչու, ինչու էր պատճառը, ինչպե՞ս պատճառ, որ Կապրուլույի 1921 թ. հուլիսի 4-ի ճիշտ վճիռը վերանայվեց արդեն հաջորդ օրը: Այս մասին ոչինչ չեն գտել ոչ այս ժողովածուում, ոչ էլ ադրբեջանցի պատմաբանների գործերում: Ինչ վերաբերում է հայ պատմաբաններին, ապա նրանք բազմիցս խիստ պատճառաբանված բացատրություններ են ուղարկել Մոսկվա ղեկուս մինչև զարաբաղյան շարժման ներկա փուլը (օրինակ, Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը 1975 և 1977 թթ. խիստ հիմնավորված պատմական տեղեկանքներ է ուղարկել կենտրոնական իշխանություններին), թեև մամուլում հանդես գալ նրանց այն ժամանակ չէին թույլատրում: Այդ միտքն մեր օրերում մամուլում («Նախկին «Երևանի» ներկայում») հայտնվեցին ճողվածներ, որոնք լույս են սփռում զարաբաղյան պրոբլեմի վերաբերյալ: Մեր կարծիքով, Լենային Ղարաբաղի նախադրումը հուլիսի 5-ին կայացված շրջագրման մեջ որոշիչ դեր են խաղացել հետևյալ հանգամանքները.

1. Ադրբեջանի այն ժամանակվա ղեկավարության (Նախկին և Նարիմանովի) սպառնալից տոնը և դիրքը, որը նա շատ ճշտ կերպով օգտագործում էր բաղադրական խնդիրներ լուծելիս (և ոչ միայն Ղարաբաղի հարցում): Հիշենք թեկուզ խնդրո առարկա ժողովածուում տեղ գտած այն փաստաթուղթը (տես էջ 89), որտեղ ասվում է, որ Ն. Նարիմանովը խնդրել է հայտնել, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի հողատու Ադրբեջանի, «այսպես ժողովածուում իրենց ցած է դնում պատմա-խառնատնությունը» և այլև: Ադրբեջանի ղեկավարության այդ դիրքի մասին բավականին տպավորիչ է ասել նաև Ալ. Մյասնիկյանը Հայաստանի կոմկուսակցության առաջին համագումարում (1922 թ. հունվարի 26—29): Պատվիրակների այն հարցին, թե ինչու Լենային Ղարաբաղը չի միացվել Հայաստանին, նա պատասխանել է. «Եթե բնութագրենք Կապրուլույի վերջին ճիշտը, ապա կարծես թե այնտեղ ետառ էին Ահառոյանը, Քոպիլիաչևը և Չխեկելին: Այսպես, Ադրբեջանը առում էր, որ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա նախ քան չենք բողոքի» (ՄԻԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 232, թ. 22—23): Հայտնի է ժողովածուի հեղինակներին և Ադրբեջանի ներկայիս ղեկավարությանը նարիմանովի և մյուսների այս դիրքորոշումը: Կարծում ենք՝ հայտնի է, թեև նրանք այդ մասին ղե-

րադասում են լուրջ ոչ միայն հայտնի է, այլև նրանք շարունակում են իրենց նախորդների բաղադրականությունը: Այդ բանի ամենապարզապես վկայությունը Ադրբեջանի կողմից Հայաստանի ներկա շրջափակումն է, որը փաստորեն նարիմանովի սպառնալիքի իրականացումն է մեր օրերում: Այս հարցում նորոշյալ, թեև, միայն այն է, որ ադրբեջանական ղեկավարը ավելի հեռու զննարկել է Հայաստանի շրջափակումը ամբողջացնելու նպատակով ղեկավարելու նաև Վրաստանի ժողովրդական ճակատին՝ պահանջելով փակել դեպի Հայաստան տանող ճանապարհները:

2. Ի. Վ. Ստալինի և վրաց մի շարք այլ կոմունիստների դիրքը, որոնք շահագրգռված էին ինքնավար միավորների սահմանի գործում: Ահա ինչու մի կողմ թողնվեցին տարածքային հարցերի լուծման պատմական, ազգագրական սկզբունքները կամարտահայտության այնպիսի դեմոկրատական ձև, ինչպիսին ներառվեց է, և շրջանառության մեջ մտցվեց «տեսնական կապի» քակրությունը:

Ի դեպ, կամարտահայտության մասին: Ժողովածուի ստեղծողները հեղինակային խոսքում փորձել են նաև ընթերցողին համոզել, որ 1921 թ. հուլիսի 5-ի որոշումից հետո շարունակվել է Լենային Ղարաբաղի ազգաբնակչության կամքի պատմաբանությունը, որն իր Ադրբեջանի օգտին է եղել: Վկայակոչված է 1921 թ. օգոստոսի 1-ին Շուշու գավառի 2-րդ տեղամասի խորհուրդների արտահերթ համագումարը, ըստ այդմ կատարված ակնհայտ կեղծիք (մեջբերում է արված ոչ թե ղյուղացիների, այլ ղեկավարի կարծիքից. տես էջ 6—7): Դրանում համոզվելու համար անհրաժեշտ է ուղղակի բացել համապատասխան էջը (95—96) և կարդալ վկայակոչված փաստաթուղթը, որտեղ սկզբում սպիտակի վրա գրված է, որ «պատվիրակներից շատերը հայտարարում են, որ իրենք չեն կարող բնակչության անունից այդ հարցի կապակցությամբ արտահայտվել և առաջարկում են գյուղերում այդ հարցերի ճանխական բնագրում հեռավորություն առ» (տես էջ 96): Մյուսում է զարմանալ, թե ինչի վրա են իրենց հույսը դրել ադրբեջանցի պատմաբանները՝ բացահայտորեն կեղծելով իրականությունը: Այս կոնկրետ դեպքում, հավանաբար, այն բանի վրա, որ ընթերցողը կրավարարվի հեղինակային խոսքով և փաստաթուղթը չի կարդալ:

Իսկապես, Կապրուլույի 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշումից հետո, Բաքվից մի քանի անգամ կուսակցական ղեկավար աշխատողներ են ուղարկվել Լենային Ղարաբաղ՝ ի նպաստ Ադրբեջանի՝ ազգաբնակչությանը որևէ որոշում կորզելու միտումով: Ընդ որում, շրջաններում զամարելով ժողովներ կամ համագումարներ, նախապես օրակարգի մեջ չէին մտցնում այդ հարցը (հավանաբար վախենալով ժողովրդի մասնակցությունից), այլ ձգտում էին իրենց նպատակին հասնել պատվիրակներին հանկարծակի բերելով և նրանց վրա նշում գործադրելով: Վերջ արդեն նման մի փաստի հանդիպեցինք (խոսքը Շուշու գավառի 2-րդ տեղամասի խորհուրդների համագումարի մասին է), որը օգտագործել են ադրբեջանցի պատմաբանները: Բայց, որպեսզի ընթերցողը համոզվի, որ նման դեպքերը նշանակալի են, ծանոթանանք հենց այդ օրերին Ղարաբաղից Երևան ուղարկած մի նամակի. «21 ր. հուլիսի 28-ին ընկ. Կարաբե և Բախվից եկած ընկ. Միրզայանը գումարեցին Խալեբեղի առաջին շրջանի գործկոմերի համագումար, ըստ որում, օրակարգում գրված էր Բախվի բանվորների համար «հացամթերի» հարցը: Համագումարին եկել էին մոտ 60 մարդ: Համագումարի բնագրում ներկայացված «հացամթերի» հարցը հետոյ պլան մղվեց. օրակարգի առաջին ճարձակվեց Լենային Ղարաբաղը: Ընկ. Կարաբե, բացառելով Լենային Ղարաբաղի կախվածությունը Դաշային Ղարաբաղից, հավաքվածներին առաջարկեց իրենց կարծիքը ասել Ադրբեջանի հովանավորության տակ ինքնավար Ղարաբաղի՝ իր արդեն լուծված հարցի մասին: Համագումարում հավաքվածները պատասխանեցին, որ երանք համագումար են եկել ոչ այդ հարցը բնագր-

կելու և որ իրենց կարծիքը արտահայտել չեն կարող: Իսկ իրենց շրջանի կարծիքը արտահայտել լիազորված չեն: Ընկ. Միրզայանը ավելի եռանդուն կերպով պաշտպանեց Ադրբեջանի սահմաններում ինքնավար Լենային Ղարաբաղի հարցը և ավելի ուժգնորեն հարկադրում էր այդ հարցի կապակցությամբ գրավոր բանաձև ընդունել հոգուտ Ադրբեջանի: Բայց երանց չանհերքելի առանձնավանների ստոր հակահարվածին միայն: Դրանով երանք ձգտում էին ձեռնարկել մի փաստաթուղթ, որով Լենային Ղարաբաղի ազգաբնակչությունը համաձայնեց Ադրբեջանի կազմում ինքնավար Ղարաբաղին: Դուրսագրվել էին նաև պաշտպան շրջանի գործկոմերը, ինչպես և մյուս շրջաններում առանձին՝ ցանկալի համաձայնություն ձեռնարկելու նպատակով: Վիճակը եզրակացվեց, իրենցում ենք միջոցներ ձեռնարկել Լենային Ղարաբաղը խորհրդային Հայաստանին միացնելու համար» (ՀՆՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 42):

Կարծում ենք, որ այսքան էլ բավական է համոզվելու, որ Լենային Ղարաբաղի տարածքում հանրաքվե չի կատարվել, իսկ առանձին շրջաններում 1921 թ. ամռանը զամարված ներկայացուցչական ժողովներն էլ Ադրբեջանի օգտին երբեք չեն արտահայտվել:

Մանրամասն ժողովածուի անպայման ընթերցողին կրթի նաև այն համոզման, որ Հայաստանի հարցում թե՛ մուսավաթականները և թե՛ ադրբեջանական կոմունիստները միևնույն հետևողական դիմ էին վարում, այն է. տիրանալ Ադրբեջանը Թուրքիայից անջատող հայկական Լենային Ղարաբաղին, Չանգզուրին ու Նախիջևանին ու դրանով իսկ ընդհանուր սահման ստեղծել, կապվել ցեղակից Թուրքիային (մուսավաթականների այդ ձգտման մասին ասված է նաև այս ժողովածուի 57-րդ էջում): Այլ կերպ ասած՝ երկուսի համար էլ խորթ չեն եղել պանթուրքիզմի պլանները, որի իրականացման ճանապարհին առաջնահերթ խնդիրը Թուրքիայի և Ադրբեջանի միջև կապի ստեղծումն էր: Տարբերությունը միայն այն է, որ եթե մուսավաթական Ադրբեջանը այդ նպատակին հասնելու համար փորձեց օգտագործել սկզբում օսմանյան զորքերը, իսկ հետո՝ անցիլիական իմպերիալիստներին, ապա Խորհրդային Ադրբեջանը՝ Խորհրդային Ռուսաստանին և բնակական Թուրքիային:

Հայտնի է, որ Օսմանյան Թուրքիան 1918 թ. զարնան և ամռան ամիսներին ձեռնարկելով արշավանք դեպի Անդրկովկաս և հասնելով մինչև Բաքու, նախ և առաջ հետապնդում էր պանթուրքիստական նպատակներ: Ռուսի պարզ ու հասկանալի է, թե ինչու նա պետք է ձգտեր Հայաստանի հաշիվն ստեղծել մեծ Ադրբեջան: Բայց սկզբում ղեկավար հասկանալի եղավ 1918 թ. վերջերին Անդրկովկասում հայտնված «ղաշնակից» Անդրիայի (հայ ժողովրդի գավառները առաջին աշխարհամարտի տարիներին ակտիվ կերպով մասնակցել էին Թուրքիայի դեմ պատերազմին ոչ միայն ուսական, այլև բրիտանական զորքերի կազմում) քաղաքականությունը, որը նմանապես ձգտում էր պահպանել և ուժեղացնել Ադրբեջանը: Շուտով, սակայն, պարզվեց, որ դրա պատճառը ոչ միայն նավթն էր, որն, անկասկած, մեծ դեր էր խաղում քաղաքականության մեջ, այլև հայերի «անուղղելի» առաստիությունը: Բանն այն է, որ Անդրիան ձգտում էր պատվար ստեղծել բուլղարիկայի Ռուսաստանի առաջ, կանգնեցնել նրա առաջխաղացումը դեպի Անդրկովկաս: Ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ «Մշակ»-ը 1920 թ. օգոստոսի 1-ի համարում «Կարմիր խաղեր» վերադասությամբ առաջնորդողում. (Անցյալ տարի անցրված գեներալները՝ Ղարաբաղի հայությունն արտահանակ դահիճներից մեկը, յանդիմանում էր հայերին, թե երանք շահույթի հետևում էր հայուն, ուստի պետք է Ադրբեջանը պահպանել իրեն ճակատաբանական ճակատ...):

Ինչ վերաբերում է ադրբեջանական կոմունիստներին, ապա նրանք համոզված օգտագործում էին այն հանգամանքը, որ Անդրկովկասում խորհրդային կարգեր առաջինը հաստատվեցին Ադրբեջանում և որ իրք նա իր օրինակով կարող է ազդել Արևելքի մուսուլմանական երկրների վրա (նման մտայնություն կար կուսակցական ամենաբարձր շրջաններում), եթե ստեղծվի հզոր և կենսունակ հանրապետություն: Իսկ դրան կարելի էր հասնել զարգյալ Հայաստանի հաշիվին: Պատահական չէ, որ արդեն ապրիլի 30-ին՝ խորհրդային կարգերի հաստատումից երկու օր անց, կարմիր Ադրբեջանը նոտա ներկայացրեց Հայաստանի կառավարությանը (տես էջ 41)՝ պահանջելով իրեն հանձնել Ղարաբաղը և Չանգզուրը (Հայաստանին նման պահանջադր ներկայացրեց նաև 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը): Պատահական չէր նաև, որ Մոսկվայի համաձայնությամբ Ադրբեջանը՝ բնակական Թուրքիայի հետ միաժամանակ 1920 թ. օգոստոսին նախապատրաստական աշխատանքներ էր տանում Հայաստանի վրա հարձակվելու նպատակով (տես էջ 29—32): Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Հայաստանի ներկա տարածքի, տարածքային պահանջների և նպատակին հասնելու համար միջոցների ընտրության հարցում Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները իրենց նախորդներից՝ մուսավաթական խախտչիկներից, թուրքիստներից և ուսուրբեկովներից ոչ միայն հետ լինեցին, այլև շատ գծերով գերազանցեցին նրանց: Եթե մուսավաթականները Լենային Ղարաբաղի նկատմամբ իրենց պահանջը պատճառաբանում էին նրանով, որ իրք առանց նրա Ադրբեջանը կենսունակ չէ (այդ միտքը նրանց ներարկել էին անգլիացիները) և որ Ղարաբաղի ու Չանգզուրի արտոնները պետք են իրենց բուլղարներին, ապա նարիմանովին ու նրա շրջապատը առաջ քաշեցին «տեսնական կապի» մասին կեղծ թեզը և սկսեցին բարբառել Ղարաբաղի հայության բարօրության մասին, որն իրք հնարավոր է միայն Բաքվի հետ կապի պայմաններում: Դրա հետ մեկտեղ չէին մոռանում նաև շանտաժը, կաշառքը «իմպերիալիստական Հայաստանի» մասին լուրերի տարածումը և այլև: Կարմիր բանակի ուժերով տիրանալով Լենային Ղարաբաղին, այնուհետև նրանք այնքան հղիվեցին, որ նա գրավի և Ադրբեջանին միացնի ոչ միայն Չանգզուրն ու Նախիջևանը, այլև Շարուր-Դարալագյազի գավառը: Այս մասին բավականին փաստաթղթեր են պահպանվել արխիվներում, բայց դրանցից և ոչ մեկը տեղ չի գտել ժողովածուում, ինչպես որ տեղ չի գտել Գ. Վ. Չիչերինի՝ Գ. Վ. Օրջոնիկիձևի ուղղված այն հեռագիրը, որտեղ նա խնդրում էր իր հեղինակությանը ազդել Ադրբեջանի կառավարության վրա, շարժվորել նրա ախորժակը: «Ադրբեջանական կառավարությունը, — գրում է Չիչերինը, — վիճելի է հայտարարում ոչ միայն Ղարաբաղը և Չանգզուրը, այլև Շարուր-Դարալագյազի գավառը: Վերջինս երբեք ոչ մեկի կողմից վիճելի չի հայտարարվել: Առանց նրա Հայաստանից համարյա ոչինչ չի մնում...» (ՄԻԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 13, գ. 32, թ. 1—2): Սակայն զուգել ադրբեջանցիներին Չիչերինը այդպես էլ չկարողացավ: Ի վերջու նրանք տեղ գործան նաև Նախիջևանին ու Շարուր-Դարալագյազի մի մասին՝ այս անգամ արդեն բնակական Թուրքիայի օգնությամբ (այդ մասին մանրամասն տես «Լրբերի հասարակական գիտություններ» հանդեսի 1989 թ. № 2—5-ում լույս տեսած մեր «Տարածքային-սահմանազրծային հարցերը մոսկովյան երկրորդ պատմության կոնֆերանսում» հոդվածը՝ ուսուրբեկին):

Վերջին երկու տարիների փորձը ցույց է տալիս, որ ադրբեջանցիների սուտն ու կեղծիքը հաճախ ավելի շատ են տեղ հասնում, քան մեր ճշմարտությունը: Ուրեմն անհրաժեշտ է շտապել, արագացնել աշխատանքները և լույս ընծայել ոչ միայն Լենային Ղարաբաղի ինքնավար Մարզի, այլև Նախիջևանի ինքնավար Չանգզուրի կառավարության ստեղծման պատմությունը ու նյութերը:

Է. Գ. ԶՈՂՐԱՔՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր